

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԵՂՈՎՈՐԱՔ

ԱՄՈՒՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԱՌՅԱՆՑ ԹՄԻՆԵՐԶԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ ՀՀ ֆինչական կոմիտեի ՀԿԳ ֆունկցիան գլխավոր վարչության մարդկանց թրաֆիկինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված է թմրամիջոցների ապօրինի օգտագործման փարսիքային ֆունկցիան վարչության փարսիքային ֆունկցիան փարսիքային ֆունկցիան փարսիքային ֆունկցիան...



չափերի թմրամիջոցների իրացմամբ, ինչի համար ստեղծել են «Շուկա» անվամբ հարթակը և իրականացրել դրա կառավարումը: Կառավարումն իրականացրել են ինչպես անձամբ, այնպես էլ որպես ադմինիստրատորներ հանդես եկող տեղագրային օգտատերերի միջոցով: Անհույս հանցավոր գործունեությանն առավել համակարգված բնույթ հաղորդելու նպատակով ընդունվել է հաստատվել է էջի գործունեության «կանոնադրություն», իսկ գործունեություն իրականացնող էջերի և գևորդների միջև առաջացած անհամաձայնությունները լուծելու համար հարթակում ընդգրկվել են «արբիտրի» կարգավիճակ ունեցող անձինք, որոնց տրվել է վեճերն ուսումնասիրելու և որոշումներ կայացնելու հնարավորություն:

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՐՎԱԾԵԼ Է ՓԱԽԵԼ

Դեկտեմբերի 8-ին՝ ժամը 9:54-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնն զանգած քաղաքացին հայտնել էր, որ Աճառյան փողոցի 2-րդ փակուղու մոտ անհայտ անձինք հարվածներ են հասցրել իրեն և հափշտակել Նարկոլոգիական հանրապետական կենտրոնից ստացած դեղորայքը: Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները պարզել են, որ 34-ամյա երիտասարդը նշված կենտրոնից ստացել է մեթադոնի իր չափաբաժինը, ինչից հետո Աճառյան փողոցի 2-րդ փակուղու մոտ երկու տղամարդ հարձակվել են նրա վրա, ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել և հափշտակելով մեթադոնը՝ դիմել են փախուստի: ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ արարքը կատարել են 54-ամյա և 59-ամյա երկու տղամարդ, երկուսն էլ՝ Երեւանի բնակիչ: Յետագա ձեռնարկված օպերատիվ հետախույզական միջոցառումների արդյունքում վերոհիշյալ տղամարդիկ, 33-ամյա երիտասարդի կողմից շահագործվող «Օպել»-ով հանդերձ, Գարեգին Մոսիսի փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել և տեղափոխվել են ոստիկանության Նոր Նորքի բաժնի: Անձնական խուզարկությամբ 59-ամյա տղամարդու մոտ հայտնաբերվել է պլաստմասե տարա՝ 40 մլ թափանցիկ հեղուկով, «Մեթադոնային լուծույթ 100 դեղաչափ» գրառմամբ: Նա հայտնել է, որ 33-ամյա երիտասարդի «Օպել»-ում կա նույն լուծույթով 5 սրվակ, որոնցից մեկը տվել է երիտասարդին: Պարզվել է, որ 59-ամյա տղամարդու մոտ է մեքենայում հայտնաբերվածը Աճառյան փողոցի 2-րդ փակուղում հափշտակվել էր 34-ամյա երիտասարդի մոտից, որին նաև ծեծի էին ենթարկել: Երեք տղամարդիկ էլ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: «Օպել»-ը տեղափոխվել է ոստիկանության Նոր Նորքի բաժնի հատուկ պահպանվող տարածք: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՈՒՇԱԳՐԱԿ ՈՍՏԻԿԱՆՆ ԻՆՔՆԱՄՊԱՆ Է ԵՂԵԼ

Աջափնյակի և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ոստիկանության աշխատակցի մահվան դեպքից «Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, ինքնասպանություն գործած ոստիկանը 25 տարեկան էր, ամուսնացած չէր: Իրավապահները ստուգել են՝ նա որտե՞ս գրություն, որտե՞ս նամակ չի թողել: Վերջինս ապրում էր իր ծնողների հետ: Հայրը տաքսու վարորդ է, և ընտանիքը ապրում է սոցիալապես նորմալ պայմաններում: Կատարվածն ամենավերջին է մնում նաև ընտանիքի անդամների համար, թե ինչու նա պետք է զենքով վերջ տար իր կյանքին: 2023 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 09:25-ին, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔԲՎ Աջափնյակի և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում լսվել է կրակոցի ծայր, որից հետո աշխատակիցները նկատել են, որ քննչական

բաժնում ծառայություն իրականացնող ոստիկանն իրեն հատկացված պահակա-կետում գտնվում է արնաշաղախ վիճակում: Վերջինս, «գլխի շրջանում հրազենա-յին վնասվածք» ախտորոշմամբ, տեղափոխվել է բուժհաստատություն: Պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ՊՊԳՎ Մաշտոցի բաժնի ոստիկան Վ.Մ.-ն 2023 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 09:00-ից, ծառայության մեջ է գտնվել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակի և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում և ժամը 09:20-ի սահմաններում քննչական բաժնում գտնվող պահակա-կետում իրեն ամրակցված «Մակարով» տեսակի ատրճանակով կրակելու եղանակով ինքնասպանության փորձ է կատարել: Դեպքի վարյում քննչական բաժնի՝ ոստիկանին հատկացված պահակակետում կատարված զննությամբ հայտնաբերվել է վերցվել են մեկ հատ 9 մմ տրամաչափի պարկուճ, մեկ հատ «Մակարով» տեսակի, 7 փամփուշտով լիցքավորված ատրճանակ, արյան հետքեր: Բժշկական կենտրոնից ազդարկվել են դեպքի պահին տուժողի հագին եղած հագուստները: Նախաքննությունը շարունակվում է:


● Դեկտեմբերի 4-10-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում գրանցվել է 406 դեպք, որից 154-ը՝ արտակարգ:



Էջը՝ ՄԱՐԻԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձեռք բերել հողամաս Գորիսում:
Ալվարդ Գովսեփյան (31 տարեկան)**



ՊԱՏԱՍԽԱՆ. Ժամանակավոր ավտոտնակ կամ առեւտրի տաղավար տեղադրելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը դիմումը մակագրում է Քաղաքաշինության եւ ճարտարապետության բաժնին: Բաժնի մասնագետների կողմից կատարվում է հատկացվող տարածքի ուսումնասիրություն եւ պահանջվում է համապատասխան փաստաթղթեր՝

1. տեղեկանք բնակավայրից,
2. ավտոտնակի համար՝ ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի պատճեն, իսկ տաղավարի համար՝ պեական ռեգիստրի վկայականի պատճեն,
3. դիմողի անձնագիրը եւ նրա պատճենը,
4. բաժնի աշխատակցի կողմից գործերին է կցվում ավտոտնակի (տաղավարի) տարածքի հատակագիծը,
5. հողատնակցման համար բնակչի կողմից վճարվում է տեղական տուրք՝ 30000 դրամ, եւ տեղական վճար՝ 5000 դրամ:

Գորիսի համայնքապետարան

«ԺՈՂՎՈՒՐԳ». Հողատնակցման նախագիծը ներկայացվում է քաղաքապետի հաստատմանը, որից հետո կնքվում է հողի վարձակալության պայմանագիր՝ 4 օրինակից, որը հաստատվում է Նոտարի կողմից: Այնուհետեւ դիմողը հողի վարձակալության պայմանագիրը եւ քաղաքապետի որոշումը ներկայացնում է Անշարժ գույքի կադաստր (30 օրյա ժամկետում) հողի վարձակալությունը գրանցելու համար:

Քաղաքաշինության եւ ճարտարապետության բաժնի հասցեն է՝ Կ.Դեմիրճյանի անվան հրապարակ, քաղաքապետարան, 3-րդ հարկ, 301 սենյակ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեղերում եւ որքա՞ն ժամանակով կարող է հեռաձգվել բաղաբացու ուղեգրումը տուն-իններնս:

Կարեն Վիրաբյան (45 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ կարող է հետաձգվել՝ քաղաքացու կամ նրա խնամակալի կողմից սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացված դիմումի (հիմնավոր պատճառների՝ առողջական խնդիրներ, հարազատի մահ, եղանակային պայմաններ եւ այլն) հիման վրա, մինչեւ 6 ամիս ժամկետով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



Ուժային եռամարտի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Գինեսի ռեկորդակիր Յուրի Սաքունցը նվաճել է պրոֆեսիոնալ բռնցքամարտի WBF վարկածով Եվրոպական գոտու մրցաշարի տիտղոսը 69 կգ քաշային կարգում: Չեխիայի Ուստի Նադ Լաբեն քաղաքում տեղի ունեցած մենամարտում Յուրի Սաքունցը հաղթել է Մոնղոլիայի ներկայացուցիչ Բազարգուր Յուդգերին՝ դառնալով WBF վարկածով Եվրոպայի չեմպիոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☀	Շիրակ	-1 - 3 +1 + 5	☀	Արարատ	+2 + 6 +6 + 11
☀	Կոտայքի լեռներ	0 - 2 +1 + 4	☀	Արմավիր	+2 + 5 +8 + 10
☀	Կոտայքի նախալեռներ	+2 + 4 +6 + 8	☀	Վայոց ձորի լեռներ	0 - 3 +5 + 8
☀	Գեղարքունիք	-2 + 2 +3 + 7	☀	Վայոց ձորի նախալեռներ	+3 + 6 +9 + 11
☀	Լոռի	-1 + 2 +3 + 6	☀	Սյունիքի հովիտներ	+4 + 6 +10 + 13
☀	Տավուշ	+2 + 4 +6 + 9	☀	Սյունիքի նախալեռներ	+1 + 3 +6 + 9
☀	Արագածոտնի լեռներ	-1 - 3 +1 + 4	☀	ԼՂՀ	+2 + 4 +5 + 8
☀	Արագածոտնի նախալեռներ	+2 + 5 +5 + 9	☀	Երեւան	+3 + 5 +7 + 9

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 11.12.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնստվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: